

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.12.2019

Տարեմուտի ընդունելություն Կենտրոնական բանկում

Կենտրոնական բանկում 25.12.2019 թ. տեղի է ունեցել տարեմուտի ավանդական ընդունելություն, որտեղ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանը հանդես է եկել ողջույնի ելույթով և գնահատել անցնող տարին արդյունավետ՝ գների և ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից:

Նա նշել է, որ ներքաղաքական փոփոխություններից հետո սա առաջին ամբողջական տարին էր, և բանկային համակարգը մեկ անգամ ևս ապացուցեց, որ երբեմն հրապարակայնորեն բարձրացված մտահոգությունները բանկային համակարգում հնարավոր խնդիրների ի հայտ գալու հետ կապված, անհիմն են:

Արթուր Զավադյանը շնորհակալություն է հայտնել ինչպես Կենտրոնական բանկի թիմին, այնպես և Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի բոլոր մասնակիցներին, որոնց ամենօրյա աշխատանքի շնորհիվ տարին ամփոփվում է փայլուն արդյունքներով:

Կենտրոնական բանկի նախագահը տարվա ձեռքբերումներում շեշտադրել է գների կայունության ապահովումը, տնտեսությունում ֆինանսական միջնորդության զգալի խորացումը, օրեցօր ֆինանսական ծառայությունների մատչելիության, թափանցիկության և հասանելիության ընդլայնումը, բանկերի և ֆինանսական համակարգի մյուս մասնակիցների տարվա բավականին բարձր ֆինանսական արդյունքները, և այլ ցուցանիշների գծով արագատեմպ աճերն ու բարելավումները:

Կենտրոնական բանկի նախագահը մեկ անգամ ևս իր երախտագիտության խոսքն է հայտնել ֆինանսական ինստիտուտներին՝ երկրի զարգացման և ֆինանսական համակարգի վերջնական կայացման համար ներդրած ավանդի համար: Նա ընդգծել է նաև, որ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից 2018 թ. իրականացված ֆինանսական համակարգի գնահատման ծրագրի արդյունքներով ևս Հայաստանի ֆինանսական համակարգը գնահատվել է կայուն, իսկ կարգավորման և վերահսկողության գործընթացները համապատասխանել են բազելյան հիմնարար սկզբունքներին շուրջ 97%-ով:

Տարվա համար հատկանշական դրսևորումներից նա նշել է նաև վարկային ներդրումների արագատեմպ աճը, և հատկապես սոցիալական նշանակություն ունեցող հիփոթեքային վարկավորման աննախադեպ՝ շուրջ 35 տոկոս աճը, որն արդյունքն է նաև Կենտրոնական բանկի և Կառավարության իրականացրած համատեղ ծրագրերի:

Արթուր Զավադյանը առանձնացրել է նաև, որ 100 խոշոր հարկատուների ցանկում տեղ են գտել բոլոր բանկերը և վարկային կազմակերպությունների մի մասը:

Շնորհավորելով ներկաներին գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ՝ Կենտրոնական բանկի նախագահը հավաստիացրել է, որ և՛ ֆինանսական ինստիտուտների, և՛ Կենտրոնական բանկի աշխատակիցների առջև դրված խնդիրները մեծ հաշվով իրականացվել են, և վստահեցրել, որ իրականացվող արդյունավետ աշխատանքները շարունակական են լինելու:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. (010) 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am